


Սմբատ Բիւրատ  
Կմբագրութիւն «Փիիկնիկ», Ի  
Աղեքսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Չր. 45  
ՍԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵՍ 25

Չր. 15  
ՍԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵՍ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է  
Ձեռագիր եւ շարժար-  
ձուիր

# Փիիկնիկ

Կը ծախուի Միկ դրուե ուղջի

404400  
ՏՆՐԵԿԱՆ Բպլ. 6  
Ազդեր կ'ընդուն-  
ուին մասնաւոր  
պայմաններով.

ՇԱՐԱՐԱՐԵՐԹ

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1902

Թիի 13

### Ա Ջ Գ

Թերթիս Տիորէն-Խմբագր-  
րին Սեպտ. 12 էն մինչև 24  
տևող հիւանդութեանը պատ-  
ճառով անցեալ շաբթուան մէջ  
անկարելի եղաւ հրատարակել  
Փիւնիկը:

Կը յուսանք թէ այսուհե-  
տև ամեն շաբաթ կանոնաւո-  
րապէս կը շարունակուի թեր-  
թիս հրատարակութիւնը:

Բայց կը խնդրենք այս առ-  
թիւ Եգիպտոսի և շրջակայքի  
մեր Պատ. Բաժանորդներէն որ  
փութացընեն իրենց վճարում-  
ները, որոնցմէ միայն կախում  
ունի թերթին յարատեւու-  
թիւնը:

### ՍԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Հայորս օտարներ. Պասպոկներու  
քաչիորդ

(Շար. 11 քիւ.էն եւ վերջ)

Երեքշաբթի օր մ'է, առտուն կա-  
նուխ դուռը կը զարնուի. դռնապանը  
կը բանայ, մէյ մը վերէն վար, վա-  
րէն վեր կը չափէ հասակը դուռը  
զարնողին ու, խաւ ֆեժով, յօրանջե-  
լով մը, կը պոռայ երեսին «հարգ մի՛ն».

Այցելուն կը կապուի կը մնայ,  
լեզուն կը բռնուի, ո՛վ կուզէ, ի՛նչ  
ըսէ. արաբերէնով բառ մը բառի մը  
մը քով չը կրնար բերել զնեւ ու  
խօսք մը չիներ. ի՛նչ ընէ. ինք գրա-  
բար գիտէ, գրաբար... Ահուելի  
ճիգ մ'ընելէ, արիւն քրտինք թաթ-  
խուելէ ետք, կը կմկմայ.

— Տի հաւակա՛յ Չիպուֆ.

Դռնապանին երեսը գոյն կուգայ  
ու շուտով կը պատասխանէ.

— Էյվա, այո՛.

Ու հիւրը ներս կ'առնէ վերջապէս:

Մեր այնքան կանուխ արթնցած պատուելին, սանդուխին երեք մատները մէկ քայլափոխով չափելով կ'երթայ իր կենայ շողիկին դրան առջեւ ու կը հնչեցնէ զիւր:

Հիմայ դէմ դիմաց նստած են, հոգաբարձուն ու վարժապետը:

Հոգաբարձուն Տ. Գառնիկ Չպուքճեան, Սահմանագրականաց երբեմնի ընտրելին ու թարգմանը, որ Վսեմ Պօղոս Բաշային ի փառս հրատարեցաւ, ու դարձեալ Բաշային խաթերը համար գնաց նստաւ աթոռին վրայ ոչ թէ թաղականի, այլ ինամակալի. այն Տիար Գառնիկը, որ մեր լուսամիտ երիտասարդութեան մէկ գործօն ու կարևոր անդամը կը կարծուէր ատեն մը. այն Տիար Չպուքճեանը, որ յառաջդիմասիրի համբաւ ալ կը վայելէր. վերջապէս Տիար Գառնիկ Չպուքճեանը, որ Հիմակուն հոգաբարձութեան մէջ է:

Վարժապետը Տիար Միհրան Ասֆանդը, իր անիմաստ նայուածքներով երկու պաղած աչքերը պատսպարած ակնոցին տակ, պաղատախառն սկիզբ մը կը դնէ իր բերանացի աղերսագրին: Գեռ չը բացած բուն վէրքը — պաշտօնէն զրկուելը — նախ կը փորձէ պատրաստել հոգաբարձուին սիրտը, շոյել անոր ետը, գրգռել ջիզերը, խըլել անոր հիացումը՝ իր գերազանց գրաբարագիտութեան հրապուրովը: Ուստի կսկսի.

- Մե՛ղք որ յոռի տեղ ինկայ.
- Ինչպէ՛ս (ճակատը շփելով)
- Յոռի, (հպարտօրէն)
- Ի՞նչ ըսել կուզէք,
- Գէջ այսինքն, գէջ տեղ ընկայ
- Հը՛, իրաւունք ունիք, ի՞նչ ընենք.
- Բայց, էֆէնտի՛ս, գոնէ դուք որ այնչա՛փ բարձր զարգացում ու

նիք, դուք պէտք էր որ պաշտպանէիք ինծի պէս հին սիւն մը:

— Այո՛, գիտեմ, հին սիւն մ'էք. բայց, սիրելի՛ս, մինակա ի՞նչ ընէի.

— Բայց ո՞վ պիտի կրնայ լեցունել իմ տեղս.

— Ո՞վ կրնայ, քանի՛ անգամներ ըսի իրենց.

— Ես մինակ Ձեր... (քիչ մնաց որ վսեմութեան ըսէր) ազնուասրտութեան կը յայտնեմ, գիտցած լինիք որ ես պաշտօնս կը կորսնցնեմ, բայց ազգն ալ Ասքանա՛ղ մը պիտի կորսնցնէ յաւիտեա՛ն...

— Ի՞նչ կ'ըսէք, միւսի՛ւ Ասքանաղ, ինչո՞ւ պիտի կորսնցնէ.

— Այո՛, յաւիտեա՛ն.

— Ինքզինքնուդ եկէ՛ք, միւսի՛ւ Ասքանաղ, դեռ յոյս կայ, խնդիրը բոլորովին վերջացած չէ. վաղը Պէյը նորէն կը դառնայ, տեսնենք, բան մը կ'ընենք:

— Ենորհակա՛լ եմ, (չարկանի շարժումներով) էֆէնտի՛ս, ընտանեօքս երախտապարտ պիտի մնամք, ո՛ւր երթաք, ի՞նչպէս ապրո՛մք, այս ի՞նչ ձիւն էր եկաւ գլխոյս. գիտեմ, գիտեմ, ան Փիլնիկը կը տեսնե՛ս, բոլորն անոր դրդումն է. Պէյն ալ միամիտ, գրածներուն հաւատաց, ամենքս ալ հանել տուաւ, հոգ չէ՛, առնելիքը թո՛ն ըլլայ. վաղը՛...:

— Այո՛, այո՛, (չտապով) վա՛ղը, քիչ մըն ալ վաղուան թուղունք. հիմայ պիտի երթամ գործի, կը ներէք.

— Բայց (վիզը ծռելով ջոջիկիմ ձեռքը իր ձեռքերուն մէջ առած) էֆէնտի՛ս, մի՛ մոռնաք զիս, փառք Աստուծոյ որ Չպուքճեանի պէս ուսումնական և ողջամիտ, խոհական և ազնուասիրտ հոգաբարձու մ'ունեցանք. եթէ դուք ալ չը լինէիք, ես ինքզինքըս, ամբողջ ընտանեօքս ծո՛վը նետեւոց էի:

— (Ժպտելով) Սիրելի՛ս, անհոգ

եղէք, (ազնիւ կիրքով մը) ինծի՛ նա-  
յէ՛, (ձեռքը սեղանին զարնելով) վիզս  
կը դնեմ ու զՁեզ նորէն Ձեր պաշտո-  
նին վրայ հաստատել կուտամ: Գնա-  
ցէք հանգիստ պառկեցէ՛ք:

— (Այֆերը յեցուած չեմ գիտեր  
ինչի՛ արցունքներով) Ո՛րքան բարի  
էք և առաքինի, էֆէնտի՛ս, Աստուած  
պահէ զՁեզ Ձեր բարձրութեան վերայ  
եւ Ձեր ազնուափայլ գերդաստանը  
պահպանէ ընդ հովանեաւ իւրով սրբով:

Դռնէն ետ կը դառնայ. — Ներե-  
ցէք, ոսկեզօծ վկայագիրներ՛րս, երկհա-  
տոր գրագիրտութի՛ւնս, Ծաղի՛կը, վազ-  
ուան Դպրո՞ցս, ևն, մի՛ մոռնաք:

— Այո՛, այո՛, շատ լաւ:

Ա՛մէ՛ն... .

Ու կը մեկնի:

Ա՛լ զինք մինակ թողունք իրեն-  
ներուն հետ:

Ուրիշ պապուկ մը:

Ասր աւելի պիտօծները կը սլքք-  
տայ. իր մաթեմաթիֆոսութիւնը, իր  
հաշուագիտական հանճարը, իր եր-  
կարամեայ ֆիւրդիստան պանդխտու-  
թի՛ւնն ու պաշտօնավարութիւնը, ման-  
րավաճառի մը շաղակրատութեամբ կը  
ծախէ ապուշ յաճախորդներու:

Ձոջերուն ո՛չ մէկն ալ երես կու-  
տայ իրեն:

Ձոջերէն մէկը միայն, հետաքրք-  
րիր, կը հարցնէ.

— Պարո՛ն Տնօրէն, ասկից առաջ  
ինչո՞վ կապրէիր:

— Տետրակները կը խառնէի, վա-  
ճառականներուն հաշիւները, երբեմն ալ  
փոխ դրամ կուտայի, առանց... կա-  
նոնաւոր տոկոսի եղաւ որ այրիներու  
դատեր ալ վրաս առի, կանխավճար-  
ներով. չեմ քաշուիր էրիկ կնկան կը-  
ռիւներու ալ միջամտելէ. փորձառու  
եմ այդ մասին, ևն:

— Է՛հ ուրեմն, ապրեցաք գնաց-  
լաւ միզգէվիտոթիս գիտէք եղբր.

— Ներեցէ՛ք, էֆէնտի, միզգէվի-

տոթիւնով ի՞նչ ըսել կուզէք.

— Ձեր գիտցածը ճա՛նրմ, եսնի  
ալօգարտոթիս:

— Հա՛, ես ալ միւսը գիտցայ, ու  
պիտի ըսէի որ ան ալ կ'ընեմ:

Թափորը կ'անցնի, նայեցէ՛ք, շր-  
ջուն արմաւենի՛ մըն է ի՛նչ է. պապուկ-  
ներուն մամուկն է, ջոջի մը դրան սեմ-  
քը կեցաւ, կը զարնէ տեսէ՛ք, ներս  
մտաւ:

Ձոջն ու ջոջին մայրը մէկտեղ:

— Մի՛ լաք, մեղք էք, Տիկին,  
արցունք մի՛ թափէք.

— (Թաշկինակը երեսին) ինչպէ՛ս  
չի լամ, տունս քանդուեցաւ: Ո՛ւր  
երթամ. նոր հարս նոր փեսայ, հան-  
գիստ սարի մը հազիւ անցուցինք, մեր  
հանգի՛ստը խռովեցին... .

(Կուլայ ու կուլայ),

— Հոգ մի՛ ընէք, Տիկին, անպատ-  
ճառ պիտի շտկուի, նորէն կառնեն  
ձեզ, ձենէ աղէկ ո՞վ պիտի գայ:

— Ա՛խ, էֆէնտիս, հանրմս, լսա՞ծ  
էք, գիտէ՞ք իմ ո՞վ ըլլալս. Դպրոցա...

— Գիտենք, գիտենք, մի՛ յոգնիք:

— Ահա՛ վկայագիրներս, ո՞ր մէ-  
կը պատմեմ. պատրիար...

— Աղէ՛կ, աղէ՛կ, ամուր պահե-  
ցէ՛ք ատոնք, ատենը կայ. մենք կ'աշ-  
խատինք, հողաբարձուններուն ալ կը  
խօսինք, քեզ նորէն առնել կուտանք:

Այս թափորը տակաւին կը տէ-  
կիմանանք միայն թէ թափորական  
պապուկներէն Ասքանազ պատուելին  
դեռ չէ՛ յոգներ ու կը զարնէ դռնե-  
րը. Տնօրէնն ալ իր վրէժը կ'առնէ  
դպրոցի Տնօրէնին սենեակին բանալիէն,  
զոր պինդ մը պահեր է տակաւին:  
Իսկ վարպետ տուտունիս, Աստուած  
բարին տայ, կը լսենք թէ Իզմիր պի-  
տի մեկնի:

Այս տգեղ պատկերները բնակա-  
նաբար պատուաբեր չեն կրնար ըլլալ  
մեր ուսուցչութեան. սակայն վարժա-  
պետներէն աւելի Պատ. Հոգաբարձու-

Թիւնը կը բռնենք մենք պատասխանատու. այն օրէն որ պաշտօնապէս հրատարեցուց վարժարանին բոլոր ուսուցիչները, պէտք էր որ չուշանար իրենց պաշտօնին մէջ վերահաստատել անոնց մէջէն արժանաւորները, որպէս զի միւսները, չը վերահաստատուածները, միանգամ ընդ միշտ յոյսերնին կտրէին ու զուր ճիգեր չը թափէին:

Վերամուտի օրերը կը մօտենան, մաղթենք որ համաճարակին հետզհետէ նուազումը թոյլ պիտի տայ մօտերս վերաբանալ մեր ալ ազգային երկվարժարանը, ինչպէս որ բացուած է արդէն Գահիրէի Գալստեանը:

**ՊԱՐՍԿԱՆՅԱՅՔ**  
(Ծանօթութիւններ)

1. Պատկաստանում, մանաւանդ Ատրպատականի գաւառներում, պարսիկները պիղծ են համարում քրիստոնեաներին, ոչ միայն թաց բաների արգելումն հայերին ձեռք մօտացնելու, այլ և չոր բաների. եթէ ձեռք տան, իրենց օրէնքով լուանալ հարկաւոր է. սակայն շատերը գաղտնապէս ուտում ու խմում են՝ կերակուրներէն ու ջրէն ի բաց՝ օղի և գինի:

2. Քրիստոնեաներին արգելուած է մինչև անգամ նայելու Պարսիկ կանանց. այս պատճառաւ էլ վերջինները ոտից ջգլուխ սև սաւանների մէջ են փաթաթվում տանից դուրս ելած ժամանակները: Մի արասցէ Աստուած, եթէ մէկից ուզենան պարսիկներ վերէժը լուծել, բաւական է որ ամբաստանեն նրան թէ «պարսիկ կին էր տարել»: այլևս քրիստոնեայ ամբաստանեալի մեծ կտորն ականջն են թողնում: Ինչպէս մի քանի տարի առաջ Ռուսիայում Ազալան անուն մի հայ տղայի վերայ ի գործ գրին իրենց

բարբարոսութիւնը, որովհետև ամենագեղեցիկ մի երիտասարդ էր եղել, որին շատ էին համոզել պարսից կրօնն ընդունելու, ափսոսացել էին որ մի այնպիսի տղայ մարդ հայ մնար, ուստի և այս տեսակ շինծու ամբաստանութեամբ Ռոմիի շուկայից բռնելով և անպատում չարչարանքներով կը տանին իրենց տեղւոյն նշանաւոր Մէջիթի առջևը կը նահատակեն, երբ վերջին անգամ էլ չի ընդունում երիտասարդը հաւատափոխ լինելու:

1897 թուականի գարնան՝ մազ մընաց որ Թաւրիզի հայոց կոտորէին, մի ինչ որ «խղճիկ» բանջարեղէն ծախող պարսիկի եւ ուսաց հիւպատոսարանի Յովհաննէս անուն հայ ծառայի միջև վէճ ծագելով, որոնց միջամտում է մի երևելի Պարսիկ հոգեւորականի կինը, որ պահուն այն տեղից պատահաբար անց է կենում որ հային անարգում է հետեւել բռուերով «չուն հա՛յ. է՛ր ես հայի՞նչում միւսի՞ր լանիս»: Յովհաննէս պատասխանում է «Բեզ ի՞նչ քա՛ծ». այլևս գէմքը բանում ու աղաղակում է Պարսիկ հոգեւորականի կինը. որի արձակած ճիշերից նոյն պահուն հազարաւոր Պարսիկներ են հաւաքվում: Յովհաննէսի բանը բուրդ էր, եթէ իրան չը քցէր մի դուռը բաց տան և կտուրներից փախչելով հիւպատոսարանը չ'ապաստանէր, Մերձակայ հայերի տուններու նմուշը չը մնաց նոյն օրը, կռիւը «շիրաւա» թաղի մօտերն էր պատահել, բայց շուկաներում պատահող հայերի գլուխն էին կտորում, նոյն իսկ բանից տեղեկութիւն չ'ունեցող պարսիկները: Այս առթիւ Ռուսական միջատութիւնը տեղի ունեցաւ. Ատրպատականը պիտի զբաւուէր, եթէ գահաժառանգի և նոյն ատենի Ատրպատականի փոխ թեմակալ Գեր. Տէր Յովսէփ Մ. Վարդապետի (այժս Եպիսկոպոս) զօրաւոր միջամտութիւնը չը լինէր: Բայց և այնպէս՝ մի շաբաթից ա-


ւելի հայերը ներս ու դուրս չը կրցին անել նրկիւղից:

3. Ատրպատական նահանգի բազմատեսակ բերքերից մինն է աղը, մանաւանդ խոյի գոյնղգոյն աղերի տեսակները, որ դուրս են գալիս հողի տակից և ծախվում բեռնով. գնողը եթէ չը խնայէ իւր անասունին, որքան ուզում է թող բառնայ, հինգ զուրուշի չափ մի յն վճարելով: Որմի ծովն էլ տեղն ու տեղալ է. փորձի համար ձեռք խրում ես մէջ ու չորանալուց յետոյ երկու դրամսչամ աղ է փչրվում ու վար թափվում:

4. Ատրպատականում առաւելապէս աչքի են ինկնում գորգերի արհեստանոցները, մասնաւորապէս Թաւրէզինը, ուր հաւաքում են գործարանների մեծութեան չափով 8—14 տարեկնակ մանուկները և կարգաւ շարում պատերի երեսն ի վեր. հասակառուներից մէկը մէջ տեղից դնում ու գալիս և անդադար երգում է թելերի գոյները. մանուկների ճկուն ու դիւրաթեք մատները գործում ու գործում են, իսկ հաւասարութեան աստիճանին հմուտ վարպետը՝ մկրատը ձեռքում կտրում է ու կտրում՝ հայելու կոկուրթեան նման փայլ տալով խալիներին: Շուկաներում, ուղտերի անցուղարձ եղած ճանապարհներում փռուել են ահագին քանակութեամբ մեծ ու փոքր խալիները, որոնց նրբութիւնը տեսնողների խելքն է տանում: Այլ խարհիս ամէն կողմերից մեծամեծ վաճառականներ են գալիս ու լեցուն գներով գնում: Ինչպէս պատմում են, Թաւրէզի արդի գործարանները մրցում են Խորասանի խալեգործարանների հետ:

Ն—ԵՐ

### ԹԻԻՐԻՄԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ



«Ա.գաս Խոսի» պարբերական թերթը իր 5րդ թուով կը ծանուցանէր թէ Հայ-Հանդէսի գործակալութիւնը ընդունած եմ եւ բաժանորդագրուիլ փափափողները կարող են ինծի դիմել:

Պ. Խմբագիրը սխալ մեկնած է իր եւ բարեկամի մը խնդրանքով հանդէսի 2 եւ 3 թիւերը զանազան հասցէներու գրելու եւ դրկելու համար ցցուցած յօժարութիւնս. ուսի հրապարակաւ կը յայտնեմ որ Հայ-Հանդէսի գործակալութիւնը ստանձնած չեմ եւ բաժանորդագրուիլ փափափողներէն կը խնդրեմ որ ինծի չդիմեն:

ՄԵՍՐՈՊ ԼՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

### ՔՐՈՆԻԿ

— ՀԱՄԱՃԱՐԱԿԸ կերևի թէ իր առաջին թափը կորուսած, գրեթէ ամբողջ Եգիպտոսի մէջ նուազելու վրայ է և ըստ Տօգթ. Բիւնչիկի, Հոկտեմբերի մէջ պիտի անհետանայ: Ստորեւ կը հրատարակենք միայն Աղեքսանդրիոյ մէջ Համաճարակին ընթացքը, Սեպտ. 11—24:

Սեպտ.	Բռնուած	Մեռած
11	52	28
12	42	22
13	46	21
14	36	21
15	40	23
16	40	28
17	34	21
18	31	21
19	31	19
20	35	25
21	41	27
22	28	16
23	36	18
24	25	12

— ՏԻԱՐ ՅՈՎՀՍՆՆԷՍ ՄԻՆԱՍԵԱՆ (Մինաս Օղյու) հանրածանօթ կտրիճը, որ 4 տարիէ ի վեր Եգիպտոս ապաստանած է, ատենէ մ'ի վեր կը գտնուի արգահատելի կացութեան մը մէջ, Կատապարտուած՝ դատարկ շրջելու Աղեքսանդրիոյ փողոցները, առտուրնէ մինչև իրիկուն:

Տեղիս Ազգ. իշխանութեանը լուրջ ուշադրութեանը յանձնելով այս ընտիր հայրենակցին այժմու վիճակը, կը փափագինք մօտ օրէն գործի մը դըրուած տեսնել զանի և ազատուած այս անտանելի դրութենէն:

Ինչ կ'ըլլայ. ա՛յնքան վաճառատուններ կան. մէկուն մէջ ծառայութեան թո՛ղ առնուի:

— ԳԱՀԻՐԷԻ Գալստեան վարժարանին նորակազմ Հոգաբարձութիւնը կը կազմեն

Տեարք Տիգրան Եպիփանեան  
Արտաւագգ Հանրմեան և  
Միհրան Մանուկեան:

Հոգաբարձութեան Պատ. Անդամները ծանօթ ըլլալով իրենց պարկեշտութեամբ ու ձեռնհասութեամբ, կը յուսանք թէ Գալստեան վարժարանը փայլուն տարեշրջան մը պիտի բոլորէ այս տարի, եթէ մէկ երկու անպէտ ու պիտի ըսեմ, վնասակար ուսուցիչներէն մաքրուի:

— ՏԻԱՐ ՍՈՒՐԷՆ Ս. ԷԹՄԷՔՃԵԱՆ որուն անցեալները հրատարակեցինք Եւրոպայէն քաղաքս ժամանումը, կը լսենք թէ Պատմութեան ու Աշխարհագրութեան ուսուցիչ կարգուած է Գալստեան վարժարանին մէջ:

Մեր անկեղծ խնդակցութիւնները կը յայտնենք համակրելի ու ապագայ խօստացող ուսուցիչին և նոյն վարժարանի Պատ. Հոգաբարձութիւնը կը շնորհաւորենք այսքան յարմար ու օգտակար կարգադրութեան մը համար:

Մեր մատաղ սերնդին ազգային դաստիարակութեան հիմը կը դաւա-

նինք տարամերձօրէն մեր պատմութիւնը, մեր լեզուն ու մեր կրօնը: Հետևաբար, Տիար Ս. Էթմէքճեանի պէս ազնիւ ու կարող երիտասարդի մը յանձնել Պատմութիւնն ու Աշխարհագրութիւնը, կը նշանակէ լիովին ըմբռնած ու լուրջ նկատողութեան առած ըլլալ ազգ. դաստիարակութեան փափուկ գործը:

— ՄԻԻՇԻՐ ՅՈՒԱՏ ԲԱՇԱՅԻ համար— որուն Դամասկոսի բանտը խեղդամահ ըլլալը ծանուցուեցաւ ատեն մը — ուսական և ֆրանսական դեսպանները, Զինովիէֆ ու Գօնօդան, ազդուօրէն միջամտած են վերջերս և յոյս կայ թէ յաջողին ձեռք բերել Էթէնաի արի յաղթողին արձակումը:

— ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ բուռն մտահոգութիւն ու տագնապ կ'առթէ այս վայրկեանս՝ Բ. Դրան ու Մեծ Տէրութեանց: Յեղափոխական հրոսախումբերը գործեցին ամեն կերպ սպաննութիւններ, բռնաբարումներ, գողութիւններ ու վանազան խժժուութիւններ, բայց կացութիւնը փոխանակ բարելաւելու, աւելի վատթարացաւ: Մեծ Տէրութեանց ընդհանուր կարծիքն է թէ՛ Մակեդոնիան խելացի վերանորոգումներով միայն կարելի է հանդարտեցնել ու բարեկարգել. վերանորոգումներ, որոնց գործադրութեանը վրայ պիտի հսկեն նոյն իսկ իրենք: Մեծ Տէրութիւնները, առանց ծանր խուճան մը Սուլթանին հեղինակութեան:

— ԼՈՐՏ ԵՒ ԼԷՏԻ ԳՐՕՄԷՐը Գահրէ բերելու համար մասնաւոր շոգեկառք մը շրկուեցաւ Բօր-Սայիտ Երկաթուղեաց Վարչութեան կողմէն:

— ԹՈՒՍԹՈՒ քաջառողջ է, հիմայ ուրախ զուարթ իր Եասնաեա-Բոլլիանա կալուածին մէջ կ'ապրի, ոտքով պտտոյտներ կ'ընէ դաշտերն ու անտառները, ազգականներով, բարեկամներով և այցելուներով: Դարձեալ գործի վրայ

է: Միշտ կը գրէ. տետրակ մ'աւար-  
տեց, մօտ է աւարտելու նաև ուրիշ  
վէպ մը, ՀԱՃԻ ՄՈՒՐԱՏ, որ սկսած է  
2 տարի առաջ և որուն նիւթն է Ռու-  
սերուն սիրանայը կովկասին:

### ՕԳՈՍՏՈՍ 24Ի ԼՍԱՐԱՆԸ

ԵՒ ԻՄ ՏՊԱՒՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ

Գահիրէի Լսարան — Ընթերցատան  
ընկերութեան գործադիր ժողովը, կի-  
րակի Օգոստոս 24ին տուաւ իր անգրա-  
նիկ Լսարանը նոր բացուած ընթեր-  
ցարանին մէջ: Բանախօսներն էին Տի-  
արք Շաւարշ Շիշմանեան, Կարապետ  
Մեսրոպեան, և մի այլ անակնկալ բա-  
նախօս Տիար Արտաշէս Յովսէփեան:

Ա. բանախօսը առանց սրոշ նիւթի  
մը վրայ ճառելու, յետագարձ ակ-  
նարկով մը պատկերացուց Լսարան-  
ընթերցատան տխուր անցեալը, ապա  
չեչտեց ընթերցանութեան օգտակա-  
րութիւնը, և հետևաբար Լսարան-Ըն-  
թերցատան գոյութեան իրաւունքը,  
որը գծազգաբար անկերպարան վի-  
ճակի մը մտնուած է ժողովրդի ան-  
տարբերութեան պատճառաւ:

Բ. բանախօսը, հակառակ իր մտա-  
ւոր կարողութեան լայնածաւալ սահ-  
մանին, համեստաբար խօսեցաւ, կանանց  
ազատագրութեան, վարժարանաց բա-  
րեփոխման, մատաղ սերնդի կրթու-  
թեան համար ուսուցիչների և ծնող-  
ների պարտաւորութեանց և այլն խըն-  
դիրների վրայ:

Ա. բանախօսը, որչափ ալ ինքնա-  
տիպ չըլլար, բայց և այնպէս նիւթի  
մատչելիութիւնը, և քիչ մ'ալ իր բե-  
մական յարմարութիւնը (երբեմնի) ի  
մի գալով չէ կարելի ըսել թէ իրենց  
օգտակար ազգեցութիւնը չ'թողին ուն-  
կընդիրների վրայ, իսկ ինչ կը վերա-  
բերի Բ. բանախօսին, չ'գիտեմ ինչպէս  
բացատրել իր տազնապալից վիճակը,  
միայն այսքան կրնամ ըսել թէ մեր

անճարակ հռետորը իր խառնիճաղանճը  
յարգելի ընծայելու համար ամեն մի-  
ջոց սպառելէ յետոյ, յուսահատ և ցա-  
ւագին սգսեց օգնութեան կանչել Շիլ-  
լէս, Գէօթէ, Հիւկօ, իրենց գերեզ-  
մաններէն, և ալ ու ձախ, երբեմն  
միոյն, երբեմն միւսին կոթնելով ա-  
ռաջ տարաւ իր բանախօսութիւնը, եւ  
ինչո՞ւ չտանէր, քանի որ այսպիսի  
մարդկանց պանծալի ասացուածներով  
պատուաստուած բանախօսութիւն մը  
որչափ ալ տկար ըլլաւ իր տեսակին  
մէջ, դարձեալ մե՞ծ ու խի՞ստ մեծ է.  
մեզ նման հասարակութեան մը հա-  
մար, որ տակաւին անտեղեակ ենք  
եւրպոսկան լեզուներու և անգիտակ  
մեծ մարդոց գործերուն:

Գ. Անակնկալ բանախօսը՝ Տիար  
Արտաշէս Յովսէփեան, խօսեցաւ յան-  
պարաստից, բայց որովհետև ինքը իր  
խօսածը չէր հասկնար, ապահովաբար  
ունկնդիրներս ալ ոչինչ չհասկցանք,  
միայն այսչափը տեսնուեցաւ որ Տիար  
Արտաշէս լռելէ անմիջապէս յետոյ  
թեթեւ ասէ կօսէի մը բռնուեցաւ Տիար  
Կ. Մեսրոպեանի հետ — երևի վերջին-  
ները մէկզմէկու լեզուէ կը հասկը-  
նային:

Ապա երգեցողութիւնները, Աստ-  
ուած իմ, ո՞րչափ անգթօրէն քաշքըշ-  
ուեցան մեր երգեցիկ խմբակի յօրան-  
ջոտ բերաններին մէջ, որոնց ի լրումն  
եթէ աւելցնենք Տիար Տ. Մարտիրոս-  
եանի աններգաչնա՛յ բացազանչութիւն-  
ները, պիտի ունենանք այն բաբելոն-  
եան համերգներէն մին, որպիսին երե-  
ւակայել անկարելի է:

Այս բոլորէն յետոյ, Լսարան-Ըն-  
թերցատան Առեկնապետ Տիար Շաւարշ  
Շիշմանեան, հակիրճ բանաձևով մը  
հրաւիրեց ունկնդիր հասարակութեան,  
Մեր Պատ. նկարիչ՝ Տիար Ե. Տէմիր-  
ճեանի «Գեղարուեստին Դերը» իմաս-  
տալից բանախօսութենէն մի մի օրինակ  
գնել ի նպաստ Լսարան-Ընթերցատան,

ու խօստանալով առաջիկային աւելի օգտակար Լսարաններ կազմակերպել փակեց հանդէսը:

Ահա Օգոստոս 24 ի Լսարանին արդիւնքը, որի մասին խօսելս գիտեմ թէ ախորժելի չպիտի թուի շատերին, բայց ինչ կարելի է ընել տխուր իրականութեան մը հանդէպ, և ինչպէս համակիր այսպիսի ազգօգուտ հիմնարկութեան մը, կը փափաքիմ իր արժանաւոր բարձրութեան վրայ տեսնել, վստահ եմ թէ նոյնքան՝ և թերեւ աւելին կը բաղձանք Լսարան-Ընթերցատան բարոյական պատասխանատու թիւնը իրենց վրայ կրող ազնիւ պարոնները, բայց բաւական չէ պղատոնական բաղձանքը, լոկ խօսելու ու խօսածին ալ կարեւոր հանգամանք մը տալու նպատակով, կնոջական կամ նմանօրինակ բարդ խնդիրներ թերու դէմ թափթփուք մը բեմի բարձունքէն գէպի ժողովուրդը նետելով Լսարան և ժողովուրդ չեն յառաջադիմեր, երկուքի համար ալ

անհրաժեշտ են առողջ մտածում, և բարի տրամադրութիւն անձնուիրաբար գործելու, ահա իսկական աշողութեան գաղտնիքը, որը ի զուր կորոնեն Մեսրոպեաններ և Յովսէփեաններ իրենց ֆուազներ յէջ:

ԿԱՐՍՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ

### ԳՈՂ ՄԺԴՅՈ

Գաւառական կեանքէն

Գրեց ՆՇԻԿ ԵՐԷՑ

Ընդ մամշով է այս վէպը, որ մօտերս պիտի լոյս տեսնէ Արախ տպարանէն:

Բաժանորդադրուիլ փափագողները 5 շրջ. ի նամակադրոյմ կրնան զրկել Փիւնիկի հասցէին:



Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, առւերու մէջ ալ, խիստ գահացուցիչ և ղիւրամատչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբագրութեան:

## SALAMANDER

### ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի:

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Իրամագլուխ 3,125,000 ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիւզօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփսանդրիա, պզտիկ Մէնչիե Ապուսուրսա փողոց թիւ 10